

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային  
հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին հանձնաժողովի անդամները

## Օրակարգում՝

1. Մարզում ներառական կրթության ուղղությամբ իրականացված աշխատանքների  
ընթացքը:

/Զեկ՝ Գ. Սայադյան/


Բացելով նիստը հանձնաժողովի նախագահ տիկին Մուրադյանը  
շնորհակալություն հայտնեց հասարակական կազմակերպություններին  
"Երեխաների պաշտպանության" օրվա կապակցությամբ հաշմանդամ երեխաների  
համար կազմակերպված ակտիվ միջոցառումների կապակցությամբ:

Օրակարգի հետ կապված տիկին Մուրադյանն առաջարկեց լսել տիկին  
Սայադյանին՝ մարզում ներառական կրթության ուղղությամբ շարունակվող  
աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Տիկին Սայադյանը հայտնեց, որ ուսումնական տարվա ավարտին  
մարզի 45 դպրոցներում է իրականացվել ներառական կրթություն, իսկ 2017-2018թթ.  
ուս. տարում այն արդեն կիրականացվի մարզի բոլոր 114 դպրոցներում: Նա նշեց,  
մարզի 114 դպրոցներից 98-ի մուտքերի մոտ առկա են թեքահարթակներ, սակայն  
դեռևս լուծման կարիք ունեն բազմաթիվ խնդիրներ՝ կապված հաշմանդամ  
երեխաների տեղաշարժման համար դասասենյակների, ինչպես նաև  
սանհանգույցների հարմարեցվածության հետ:

Ամփոփելով նիստը, տիկին Մուրադյանը քաղաքաշինության վարչության պետ  
Կ.Դանիելյանին առաջարկեց հսկողություն իրականացնել նոր կառուցվող և  
վերանորոգվող դպրոցների նախագծանախահաշվային փաստաթղթերում  
հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված քաղաքաշինական  
նորմերի և պահանջների ապահովման ուղղությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝



Լ.Մուրադյան

Արձանագրող՝ Հ. Հարությունյան